ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 20.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/12

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.01.2018թ. թիվ 03/26-3/874-18 գրությամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 16.01.2018թ. թիվ ԴՎԱ/158 գրության հիման վրա, 23.01.2018թ. թիվ 03/26-3/874-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Լեյկոալեքս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Լեյկոալեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 07.02.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտի գնային առաջարկում՝ հավելված 5-ում, «Ապրանքի անվանումը» սյունակում ներկայացրել է հետևյալ տեղեկությունները. «Վիրակապեր /Բինտ ստերիլ/ 7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2», այսինքն ապրանքի անվանման հետ միասին հստակ ներկայացրել է այն, որ պատվիրատուին առաջարկվող ապրանքի խտությունը 28գ/ք.մ է: Այս տեղեկության համաձայն պատվիրատուն արձանագրելով անհամապատասխանություն հրավերի օրինակելի ձևի պահանջների նկատմամբ, պետք է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի համաձայն պետք է մերժեր Ընկերության հայտը, իսկ չմերժելու դեպքում փաստացի ընդունում է Ընկերության կողմից առաջարկված տարբերակը: Սակայն ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հիմք չեն ընդունվել գնային առաջարկով ներկայացված տեղեկությունները, որի արդյունքում հայտը հետագայում սխալ հիմնավորմամբ մերժվել է և խախտվել է Ընկերության իրավունքները:

Համաձայն հրավերի պահանջների՝ Պատվիրատուն ծանուցում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին, առաջարկելով սահմանված ժամկետում ներկայացնել «առաջարկված ապրանքի ամբողջական բնութագրերը», այլ ոչ թե հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերը:

Ընկերությունը հավելված 6.1-ով ներկայացրել է առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը, իր նախնական առաջարկից որևէ կերպ չի շեղվել և ուղղակիորեն կատարել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործողությունները: Ընկերությունն ամենևին չի ներկայացրել կեղծ տվյալ կամ տեղեկատվություն և ի սկզբանե գնային առաջարկի մեջ նշել է, թե ինչ ապրանք է պատրաստվում մատակարարել:

Ընկերությունը գտնում է, որ նման իրավիճակում Ընկերությանը Ցուցակում ներառելու պահանջը հիմնավոր չէ, ուստի հիմքերի բացակայության պատճառով այդ պահանջն անհրաժեշտ է մերժել:

Ի լրումն 07.02.2018թ. դիրքորոշման՝ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն մեկ այլ գրությամբ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետով գնման գործընթացի հասկացությունը սահմանված է հետևյալ կերպ.

գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Այսինքն, Ցուցակում Ընկերությանը ներառելու հետ կապված բոլոր գործողությունները հանդիսանում են գնման գործընթացի բաղկացուցիչ մաս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքով ամրագրված այս դրույթների համաձայն՝ գնման գործընթացում տեղի ունեցած բացարձակ նույն իրավիճակների համար անհրաժեշտ է դրսևորել միևնույն մոտեցումն առանց բացառության, հակառակ դեպքում խախտվում է Օրենքի սկզբունքը:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 02.03.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

Ընթացակարգի հրավերին կից հավելված 5-ով սահմանվել է գնային առաջարկի հետևյալ օրինակելի ձևը.

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
...	...			

Հրավերին կից պայմանագրի նախագծի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով, Պատվիրատուն սահմանել է ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ հետևյալ բովանդակությամբ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ապրանքի CPV անվանում	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ
Ռենտգեն նկարների ժապավեններ	Carestream կամ համարժեք ֆիրմայի չոր երևակման ժապավեններ 35X43 N125	35x43 ստերիլ, գործարանային փաթեթավորումով տուփ N125, համատեղելի կլինիկայում առկա Carestream տպիչի հետ
Ռենտգեն նկարների ժապավեններ	Ռենտգեն ժապավեն	30սմx40սմ /ուժեղացնող կանաչ էկրանի համար/ գործարանային տուփերով, N100
Վիրակապեր	Բինտ ստերիլ	Բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93 պահանջներին, 7մ.x14սմ չափերի ստերիլ բինտեր
Բժշկական թանզիֆ (մարլյա)	Թանզիվ բժշկական	Լայնությունը՝ 90 +/- 1,5սմ, երկարությունը 1000-1200 մետր, խտությունը՝ 28հg-32 գ/ք.մ., մնացած ցուցանիշները՝ ըստ ստանդարտի (ту 9393-001-51955108-2002 կամ 9393-021-00320455-2010): Փաթեթ

Ընթացակարգի հրավերին կից 4-րդ հավելվածով մասնակիցը ներկայացնում է հայտարարություն, որ պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը,

արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերին կից 6.1-րդ հավելվածով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հետևյալ օրինակելի ձևին համապատասխան.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն, մասնակցելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, հայտով ներկայացրել է հավելված 5-ը՝ գնային առաջարկը, հետևյալ բովանդակությամբ.

Չափա- բաժինների համարները	Ապրանքի անվանումը
3	Վիրակապեր /բինտ ստերիլ/ 7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Այնուհետև, նույն արձանագրության 4.1 կետով՝ Ընկերությունը Ընթացակարգի թիվ 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և սահմանված եռօրյա ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջված հավելված 6-ը և 6.1-ը:

Սակայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը որակվել են հրավերի պահանջներին չհամապատասխանող և

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ին տրամադրվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետ՝ անհամապատասխանությունները շտկելու համար:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է նշված հավելվածները՝ անհրաժեշտ շտկումներով հանդերձ, սակայն գնահատող հանձնաժողովը նորից մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ «Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով նախատեսված բինտ ստերիլ ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով սահմանված էր, որ բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ-1172-93-ի պահանջներին, համաձայն որի բինտերը պետք է լինեին բժշկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն ГОСТ-9412-ի: Ընդ որում, ըստ ГОСТ-9412-ի՝ բինտերի կտրման համար նախատեսված թանզիֆի խտությունը պետք է լիներ 36 գ/քառ. մետր, թույլատրելի շեղումը՝ 5, այնինչ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող բինտերի խտությունը նշվում է 28+/-2 գ/քառ. մետր, ինչը չէր համապատասխանում հրավերի պահանջներին»:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել է Ընկերության հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով, ուսումնասիրելով «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը, Ընկերությունը գտնում է, որ վերջինիս ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի հավելված 5-ով սահմանված գնային առաջարկի օրինակելի ձևին, այսինքն հրավերի պահանջներին:

Մասնավորապես, Ընկերությունը, սահմանված օրինակելի ձևին համապատասխան, գնային առաջարկի երկրորդ՝ «Ապրանքի անվանումը» վերտառությամբ սյունակում պետք է նշեր միայն ապրանքի անվանումը, մինչդեռ այդ սյունակում, բացի ապրանքի անվանումից, Ընկերության կողմից նշվել է նաև ապրանքի ամբողջ տեխնիկական բնութագիրը, ինչը Ընկերությունը պարտավոր էր ներկայացնել միայն առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո՝ հավելված 6.1-ով: Այսինքն՝ առաջին փուլում հայտ ներկայացնելիս, «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն պետք է ներկայացներ միայն գնային առաջարկը՝ նշելով չափաբաժնի համարը, ապրանքի անվանումը և գինը և միայն առաջին տեղ զբաղեցնելուց հետո պետք է Պատվիրատուին ներկայացներ իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջ տեխնիկական բնութագիրը՝ համապատասխանաբար հավելված 6.1-ով:

Փաստորեն, հավելված 5-ով ներկայացված գնային առաջարկում Ընկերության կողմից միավորվել են երկու հավելվածներով (համապատասխանաբար 5-րդ և 6.1-րդ) սահմանված պահանջները և տեղեկատվությունը, և արդյունքում «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանել Ընթացակարգի հրավերի հավելված 5-ով սահմանված օրինակելի ձևին, այսինքն հրավերի պահանջներին:

Ուսումնասիրելով վերոնշյալ փաստերն ու փաստական հանգամանքները՝ Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գնահատելիս՝ ղեկավարվելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, անհապաղ պետք է մերժեր Ընկերության կողմից ներկայացված հայտը՝ գնային առաջարկը հրավերի պահանջներին անհամապատասխան լինելու հիմքով:

Մինչդեռ Պատվիրատուի կողմից 30.11.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.3-րդ ենթակետով «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից հայտով

ներկայացված փաստաթղթերը գնահատվել են որպես «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող: Այնուհետև, Ընկերությունը 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և վերջինից պահանջվել է երկրորդ փուլի որակավորման փաստաթղթեր (նաև հավելված 6.1):

Սակայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը որակվել են հրավերի պահանջներին չհամապատասխանող և Ընկերությանը տրամադրվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետ՝ անհամապատասխանությունները շտկելու համար:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է նշված հավելվածները՝ անհրաժեշտ շտկումներով հանդերձ, սակայն գնահատող հանձնաժողովը նորից մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ «Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով նախատեսված բինտ ստերիլ ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով սահմանված էր, որ բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ-1172-93-ի պահանջներին, համաձայն որի բինտերը պետք է լինեին բժշկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն ГОСТ-9412-ի: Ընդ որում, ըստ ГОСТ-9412-ի՝ բինտերի կտրման համար նախատեսված թանզիֆի խտությունը պետք է լիներ 36 գ/քառ. մետր, թույլատրելի շեղումը՝ 5, այնինչ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող բինտերի խտությունը նշվում է 28+/-2 գ/քառ. մետր, ինչը չէր համապատասխանում հրավերի պահանջներին»:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել է Ընկերության հայտը»:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն դեռևս հայտերի բացման նիստում, ղեկավարվելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, անհապաղ պետք է մերժեր Ընկերության կողմից ներկայացված հայտը՝ գնային առաջարկը հրավերի պահանջներին անհամապատասխան լինելու հիմքով (իսկ

գնային առաջարկը հանդիսանում է չշտկվող փաստաթուղթ), սակայն Պատվիրատուն չարձագանքելով առկա անհամապատասխանությանը և այդ փուլում չմերժելով հայտը՝ շարունակել է Ընթացակարգը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի 30.11.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.3-րդ ենթակետով Ընկերության մասով կայացրած որոշումը, այն է «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան գնահատելու վերաբերյալ, հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներին և այդ հիմքով անվավեր է և ոչ իրավաչափ: Ուստի և ոչ իրավաչափ է և անվավեր տվյալ որոշումից հետո Պատվիրատուի կողմից Ընկերության մասով կայացված բոլոր որոշումները, այդ թվում նաև հանձնաժողովի 28.12.2018թ. նիստի թիվ 4-րդ արձանագրությամբ Ընկերության կողմից արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու և վերջինիս տվյալները ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացնելու վերաբերյալ որոշումները՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ընկերությունը նշել է նաև, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացված 06.06.2016թ. թիվ 56/16 որոշմամբ բավարարվել է «Ադամանդ Մեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և որոշվել է, որ «Ադամանդ Մեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը պետք է մերժվեր դեռևս հայտերի բացման փուլում՝ գնային առաջարկը հրավերի պահանջներին անհամապատասխան լինելու հիմքով (գնային առաջարկը պարունակել է նաև առաջարկվող ապրանքի ամբողջ տեխնիկական բնութագիրը):

Ընկերությունը գտնում է, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը, քանզի ի սկզբանե, դեռևս գնային առաջարկով Ընկերությունը ներկայացրել է 3-րդ չափաբաժնով իր ապրանքի տեխնիկական բնութագիրը և նման պայմաններում չէր

կարող հավելված 6.1-ով ներկայացնել այլ տեղեկատվություն, քան հայտնել հայտը ներկայացնելիս:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է «Լեյկոալեքս» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.02.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 16.01.2018թ. թիվ ԴՎԱ/158 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների գնման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 7 մասնակիցներ, այդ թվում՝ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-Ն գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մանսակից: Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզել է, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 26.12.2017թ. ժամը 11:35-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունների միայն մի մասը:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և վերջինիս հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.02.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/12 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/12 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն:

2. «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ՝ հետևյալ բովանդակությամբ.

Չափա- բաժինների համարները	Ապրանքի անվանումը
3	Վիրակապեր /բինտ ստերիլ/ 7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2

3. Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է նույն հրավերի համապատասխան չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագրին:

4. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 3-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռք բերել հետևյալ ապրանքը.

Հ/հ	Ապրանքի CPV անվանում	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ
3.	Վիրակապեր	Բինտ ստերիլ	Բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93 պահանջներին, 7մ.x14սմ չափերի ստերիլ բինտեր

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

6. «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով՝ ներկայացվել է առաջարկվող ապրանքի հետևյալ նկարագիրը.

3	Վիրակապեր /բինտ ստերիլ/ 7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2	Բինտ ստերիլ 7մx14սմ	Բինտ ստերիլ 7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժվել:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.01.2018թ. թիվ 03/26-3/874-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 16.01.2018թ. թիվ ԴՎԱ/158 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-6-րդ մասերի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված

պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

48.Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար նախատեսվել է ձեռք բերել հետևյալ ապրանքը.

Հ/հ	Ապրանքի CPV անվանում	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ
3.	Վիրակապեր	Բինտ ստերիլ	Բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93 պահանջներին, 7մ.x14սմ չափերի ստերիլ բինտեր

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ՝ հետևյալ բովանդակությամբ.

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը
3	Վիրակապեր /բինտ ստերիլ/ ***7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2***

Միևնույն ժամանակ Ընկերությունը ***հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է նույն հրավերի համապատասխան չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագրին:***

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն, որպես Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտի թիվ 6.1 հավելվածով ներկայացել է առաջարկվող ապրանքի հետևյալ նկարագիրը.

3	Վիրակապեր /բինտ ստերիլ/ 7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2	Բինտ ստերիլ 7մx14սմ	Բինտ ստերիլ 7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության մեջ ամրագրվել է, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագրի 3-րդ չափաբաժնով նախատեսված «ստերլ բինտ» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով սահմանված է, որ բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93-ի պահանջներին, համաձայն որի բինտերը պետք է լինեն բժշկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն ГОСТ-9412-ի: Ընդ որում՝ ГОСТ-9412-ի համաձայն՝ բինտերի կտրման համար նախատեսված թանզիֆի խտությունը պետք է լինի 36գ/քառ. մետր, թույլատրելի շեղումը 5%, այնինչ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող բինտերի խտությունը նշվում է 28+/-2 գ/քառ. մետր, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին (հիմք՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից 22.12.2017թ. տրամադրված թիվ 19/2806 մասնագիտական եզրակացություն):

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ Ընկերությանն առաջարկվել է մեկօրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընկերության կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է պարզաբանում, որտեղ նշվել է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին, քանի որ ГОСТ 1172-93-ի 1.2.1 կետի համաձայն՝ բինտերը պետք է լինեն բժշկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն ГОСТ-9412-ի կամ սպառողի հետ համաձայնեցված դեպքերում, այլ նորմատեխնիկական չափանիշներով բժշկական թանզիֆից, որը նշանակում է, որ խտությունը կարող է լինել 28+/-2-ից մինչև 36+/-2: Ընդ որում Ընկերության կողմից նախապես գնային առաջարկով նշվել է տվյալ ապրանքատեսակի խտությունը և գնահատող հանձնաժողովը, բավարար գնահատելով Ընկերության հայտը, այն համարել է ընդունելի կամ համաձայնեցված:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտը նշված հիմքով գնահատել է հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել է:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով նախատեսվել է, որ բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93 պահանջներին:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի www.sarm.am պաշտոնական կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ ԳOUS 1172-93-ը ներառված է ազգային ստանդարտների կատալոգի մեջ և համարվում է ակտիվ ստանդարտ: Նշված ստանդարտի 1.2 կետի 1.2.1 ենթակետի համաձայն՝ բինտերը պետք է պատրաստված լինեն բշժկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն ԳOUS 9412-ի կամ սպառողի հետ համաձայնեցված դեպքերում, այլ նորմատեխնիկական չափանիշներով բժշկական թանզիֆից:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի www.sarm.am պաշտոնական կայքում առկա տեղեկատվության համաձայն ԳOUS 9412-ն նույնպես ներառված է ազգային ստանդարտների կատալոգի մեջ և համարվում է ակտիվ ստանդարտ, որի 3.2 կետի 3.2.5 և 3.2.6 ենթակետերով սահմանվում է, որ բինտերի կտրման համար նախատեսված

սպիտակեցված թանզիֆի խտությունը պետք է լինի 36 գ/քառ. մետր, իսկ թույլատրելի շեղումը կարող է լինել 5%:

Ընկերության կողմից նշվել է, որ վերջինիս կողմից ի սկզբանե գնային առաջարկի մեջ մատնանշվել է առաջարկվող ապրանքի խտությունը և գնահատող հանձնաժողովը ի սկզբանե պետք է մերժեր Ընկերության հայտը: Այս առումով Խորհուրդն արձանագրում է, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն հայտի գնային առաջարկի մեջ «ապրանքի անվանումը» տողում նշել է ***«Վիրակապեր (բինտ ստերիլ) 7մx14սմ, հատ ըստ՝ ГОСТ 1172-93՝*** խտությունը 28+/-2: ***Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտի 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է նույն հրավերի համապատասխան չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագրին:*** Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար հիմք չէր կարող ունենալ Ընկերության գնային առաջարկը մերժելու համար, քանի որ Ընկերությունը գնային առաջարկի մեջ նշել է հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքի անվանումը, ինչպես նաև այն, որ առաջարկվող ապրանքը համապատասխանում է ԳOUS 1172-93-ին և ներկայացրել հայտի վերը նշված հավելված 4-ը:

Դրա հետ մեկտեղ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն և մասնակիցը մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկում անհամապատասխանությունը, ապա, անկախ նշված ժամկետից հետո այդ

անհամապատասխանությունը շտկելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում, նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, Խորհուրդը գտնում է, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.01.2018թ. թիվ 03/26-3/874-18 գրությամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04414816) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Լեյկոալեքս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**